ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆՊԵՍ ԻՆՉՊԵՍ ՈՐ Է



Խորհրդային տարիներին՝ 60-80-ական թվականներին, տպագրվեցին Հայ ժողովրդի պատմության ութ հատորները, որոնք բնականաբար խորհրդային ժամանակվա կնիքն ունեին իրենց վրա եւ գրված էին, այսպես կոչված, դասակարգային պայքարի մարքս-լենինյան գաղափարախոսության դիրքերից ու տեսանկյունից: Եվ, բնականաբար, անկախության տարիներին խնդիր ծագեց ձեռնամուխ լինելու նոր, հայոց պատմության ակադեմիական բազմահատորյակի հրատարակության:

Ազգ-ը զրուցեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի հետ ու տեղեկացավ, որ բազմահատորյակի հրատարակության գործում իր մեծ ներդրումն է ունեցել լուսահոգի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը: Երջանկահիշատակ Անդրանիկ Մարգարյանը համաձայնեց այս խնդիրը իրականացնել պետական ֆինանսավորմամբ, որովհետեւ բազմահատորյակը համահայկական նշանակություն ունեցող կարեւոր խնդիր էր: Կային անհատներ, ասաց պրն Մելքոնյանը, որոնք պատրաստակամություն էին հայտնում ստանձնել տպագրության գործը, բայց մենք՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը, նախընտրեց համեստ, բայց պետական ֆինանսավորումը, որովհետեւ սա բացառիկ նշանակություն ունեցող հարց է: 2004 թվականի վերջին նախատեսվեց, որ Պատմության ինստիտուտը ձեռնամուխ է լինում հատորների հրատարակությանը եւ ինստիտուտի պատմաբանները սկսեցին զուգահեռաբար աշխատել բոլոր հատորների վրա: Որոշվեց չորս հատոր հրատարակել, յուրաքանչյուրը երկուական գրքով, ասաց պրն Մելքոնյանը: Դրանով մենք լուծեցինք մի կարեւոր խնդիր՝ հայ ժողովրդի պատմության պարբերացման հարցը, որովհետեւ խորհրդայինի ժամանակ այդ պարբերացման խնդիրը եւս աղավաղված էր, եւ մենք այժմ, ըստ դարաշրջանների՝ Հին պատմություն, Միջնադար, Նոր եւ Նորագույն, բաժանեցինք այս սկզբունքով եւ յուրաքանչյուր դարաշրջանը ներկայացնում ենք երկուական հատորով: Այսինքն՝ յուրաքանչյուր հատոր ունի երկու գիրք: Ինչպես ասաց պրն Մելքոնյանը, բազմահատորյակի աշխատանքները տարվում էին զուգահեռաբար եւ այն հատորները, որոնք պատրաստ են եղել, հանձնվել են

տպագրության: Ամեն տարի որոշվել է երկուական հատորի ֆինանսական խնդիրը լուծել: Ուրբաթ օրը Պատմության ինստիտուտի դահլիճում կկայանա Հայոց պատմության III եւ IV հատորների առաջին գրքերի շնորհանդեսը: Երրորդ հատորի առաջին գիրքը ընդգրկում է 17-րդ դարի II կեսից մինչեւ 19-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածը: Իսկ չորրորդ հատորի առաջին գրքում տեղ են գտել 1918 թվականի Հայաստանի առաջին հանրապետությունից մինչեւ Հայրենական մեծ պատերազմի ավարտը՝ 1945 թվականն ընկած ժամանակահատվածը՝ Նորագույն պատմության առաջին փուլը:



Իսկ թե որն է նորույթը Ազգ-ի հարցին պրն Մելքոնյանն ասաց. Բազմահատորյակների հեղինակային կազմը մոտ 100 հոգի է, գոյություն ունի խմբագրական խորհուրդ եւ կա յուրաքանչյուր հատորի խմբագրություն: Աշխատանքը գրված է անաչառ, այսպես ասած, դասակարգային պայքարի, մարքս-լենինյան գաղափարախոսության կապանքներից ազատ, պատմահամեմատական սկզբունքի հիման վրա, նոր աղբյուրների ընդգրկմամբ եւ վերջին 20 տարվա ընթացքում հայ պատմագրության մեջ, մեր գիտնականների ձեռք բերած հաջողությունների հիման վրա: Այսինքն, սա միանգամայն նոր խոսք է ազգային- ազատագրական պայքարի, քաղաքական կուսակցությունների, պատմական ժողովրդագրության, որը շատ լուրջ եւ քաղաքական նշանակություն ունեցող ոլորտ է, ինչը մենք աչքալեող էինք արել, իսկ այժմ դրանք անպայմանորեն տեղ են գտել հատորներում: Չեն անտեսվել եւ տեղ են

գտել հատորներում Արեւմտյան Հայաստանի պատմության խնդիրը, Հայ առաքելական եկեղեցու դերն ու տեղը մեր պատմության մեջ, հայ ժողովրդի ծագումնաբանության հարցը: Առաջին հատորում տեղ են գտել հայ ժողովրդի բնիկության, հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ հայոց լեզվի տեղի, դերի, Հայկական լեռնաշխարհի, մարդաբանական արմենոիդ տիպի եւ այլ խնդիրներ, որոնք բնականաբար չէին կարող տեղ գտնել խորհրդային ժամանակներում հրատարակված, Հայ ժողովրդի պատմության հրատարակություններում: Դրն Մելքոնյանը բազմահատորյակի լույսընծայումը կարեւորեց նաեւ գաղափարական իմաստով, առավել եւս, որ դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի անկախության 20-ամյա հոբելյանների նախօրյակին:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ազգ, 2011, 14 սեպտեմբեր, էջ 6